

երկաթի, տափանով տափանելի որից յետոյ անմիջապէս հարկաւոր է հաւաքել խոտերի արմատները: Որքան շատ կրկնուի այս վերջին դործողութիւնը, այնքան աւելի կ'աւարտի աւելորդ բոյսերը:

Այս երկու կերպ առաջացող խոտերը աւելի հեշտ կերպով կ'մաքրուեն, եթէ արտի մէջ զետնախնձոր, կաղամբ, ձակնդեղ և այլ այս տեսակ բոյսեր ցանուեն որովհետեւ սրանց մէջ պարսպ մնացած անդերը յաճախակի փորուելուց, նրանք արմատահան կլինեն և կը չորանան: Խոնաւ արտերը չորացնելով, ջուր սիրող բոյսերը կ'չորանան: Եթէ արտի երեսին կիր ցանենք, անպէտք խոտերը դարձեալ կ'ոչնչանան:

Քաղհանել կարելի է հողի ոչ շատ խոնաւ և ոչ էլ շատ չոր ժամանակը, պատճառ որ խոնաւ ժամանակուայ պոկած և վայր ձգած խոտերը կարող են նորից աճել, իսկ չոր ժամանակը, մանաւանդ եթէ հողը կաւային է, նրանք արմատով չեն դուրս գալիս, միայն վերևի մասերն են պոկուում: Թողնելով արմատը հողի մէջ, այնպէս որ մի քանի ժամանակից յետոյ կարող է բոյսը նորից աճել: Յայտնի է, որ շատ հողատէրեր և զիւղացիներ աշխատում են տարեց տարի վարելուց և տափանելուց յետոյ արտերի երեսին դուրս եկած քարերը հաւաքել, համարելով այդ ցանքերին մնասակար: Բայց վերջին փորձերը ցոյց են տալիս որ սխալ է այդ: Բարձրանալով օդի տաքութեան աստիճանը, կրաքարանայ նաև հողի տաքութեան աստիճանը, մանաւանդ, երբ հողը հարուստ է քարերով: Ընդհակառակը օդը սառչելով, քարքարոտ հողերն ևս արագապէս պաղում են: Այդ բանը բացատրւում է նրանով, որ քարերը տաքութիւն լաւ հաղորդող մարմիններ են: Բայց այնուամենայնիւ դարձեալ, եթէ քարերը շատ են և խոշոր, պէտք է մի մասը հաւաքել, որպէսզի բոյսերը ծածկուած չմնան և իզուր տեղ տարածութիւն չբռնեն:

Որքան քարեր շատ լինեն արտի մէջ, այնքան նրանց մէջ մնացած հողի տարածութիւնը խոնաւ կլինի, որովհետեւ անձրեւային ժամանակ քարերը փռուածքի դեր խաղալով, պահում են ջուրը հողի վերին շերտերում:

Իսկ երաշտութեան ժամանակ արդեւք են դառնում հողի ներքին շերտերի-խանձարուների մէջ իրենց տակ գտնուող ջրերի գոլորշիացման, ծառայում են իրեն ծածկոց և որովհետեւ ամառը բոյսերը մնասում են աւելի խոնաւութեան պակասութիւնից, քան առատութիւնից, այդ պատճառով էլ քարերի այս տեսակ ներգործութիւնը պէտք է օգտակար համարել: Եթէ քարերի քանակութիւնը հողի ծաւալի 30% չի անցկենում, հունձը առատ կլինի, որից աւելին արդէն մնասակար է համարւում: Ամենալաւ կերպով են ներգործում քարերը, երբ նրանց ծաւալը ամբողջ հողի ծաւալի 10—20% է կազմում: Երբ հողը չափից դուրս թեթեւ է, արտում քարեր թողնելը դարձեալ օգտակար է, որպէսզի նրանք իրենց ծանրութեամբ հողը կոխելով մասնիկները իրար միացնեն: Իսկ երբ հողը կապոյտ կաւ է, մանր քարերը կարգելեն հողի մասերը պինդ կերպով իրար կպչել և իրենք տաքանալով, կտաքացնեն նաև հողի շերտը:

(Կը շարունակուի):

Գ. Ղ.



## ՇԻՐԱԿԻ ԳԻՒՂԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՅ

### ՊԱՏԿԵՐՆԵՐ

Ա.

ԳՈՒՂՈՅԵՆՅ ՏՈՒՆԸ.

Գուլոյենց տունը Ղ. զիւղի մէջ առաջնակարգ տներից մէկն է: Տան նահապետ (տան մենծ) Թորոսը 76 տարիքն կըրած՝ միջակ հասակով մի ալեգարդ ձերունի է: Նրա շարժուածքից և նիստ ու կացից երևում է, որ զեռ ևս չի հանգել իւր մէջ կորովն ու եռանդը, այլ ընդհակառակն տարիքն աւելանալով՝ նա աւելի կրակոտ և դործունեայ է դառել: Թորոս արարը թէև գաւազանը ձեռից վայր չի բցում, իւր անրաժան ընկերն

է շինել, բայց այդ գաւազանը (որին սարգաւս-  
տայ անունն է տալիս) ծառայում է նրան ոչ  
թէ, որպէս յենարան, այլ որպէս խոնարհ  
հրամանակատար: Սա սարգաւստան ձեռին շա-  
րունակ ման է, զայիս գովերում հորթնոցում,  
ոչխարանոցում, գառնոցում, և արթուն աշ-  
քով հսկում նոցա վերայ. եթէ իւր խոնարհ  
հայտատաներից մինը՝ լինի նա՝ հարս թէ աղ-  
ջիկ, երիտասարդ թէ մանուկ, միամտաբար  
պարտազանց է գտնուել, հասնում է անխնայ  
սարգաւստայի ծայրը՝ նրա զաղաթին և քոթ-  
թաղանթով յիշեցնում իւր պարտականութիւն-  
նր: Թէև իւր կնճիւղը դրել է Թորոսի ձախա-  
տին ծերութիւնը, բայց այդ կնճիւղները դուրե-  
կան են և զբաւիչ: Հեղահամբոյր դէմքը քամուց  
և արեւից պրուած այտերով կարծես շարունակ  
ժպտում է: Սորա ուրախ և պարզ աչքերում  
կարդացւում է խղճի հանգստութիւնն ու  
անդորրութիւնը և անցկացրած մաքուր ու  
անարատ կեանքը ամուսնական սուրբ յարկի  
տակ:

Դեռ նոր երեք զաւակի տէր 25 տարե-  
կան երիտասարդ էր Թորոսը, որ նորա հօ-  
րեղոր որդիքը բաժանուեցան նրանից: Թո-  
րոսի հայրն ու մայրը լու գիտեալով, որ  
թաք ձեռը ծախ չի տայ՝ միայն թէ ուշ  
նրան պիտի մնակ թողնեն հօրեղոր որդիքն  
ու բաժանուին, աչքի առաջ ունենալով ի-  
րենց պատկենական ասածուացքը թէ՛ մէկ  
առաւօտն տեղիցը շուտ վեր կենոյն ու մէկ  
էլ թէ՛ պատկենոյն փոշման չէ, նոքա դեռ  
պատանի հասակում պատկեցին իրանց աչքի  
լուս, մինու ճար Թորոսին, որ նրան թեւին թե-  
լնկեր հասնի: Սակայն Թորոսի բաղդից նրա  
առաջին երեք զաւակներն աղջիկ էին, թէև  
նա տխուր չէր դրա համար—գիտէր, որ նոքա  
իրեն ծանրութիւն չեն, աղջիկն որ կայ՝ ձրի  
մշակ է, փոր հացի և հազուատի համար հօր  
տանը կաշխատի, կաշխատի և երբ իւր տա-  
րիքն առաւ, բաղդը բացուեցաւ ու տէրը  
գտաւ՝ իւր իւզն իւր գլուխն կը քսուի թափ  
կը տայ փէշը, կը գնայ, բայց կը ցանկար նա  
որ իւր առաջին զաւակները տղայ լինէին,  
թեւին թեւ ընկեր հասնէին: Մինչ արու զա-  
ւակ ունենալն և նրա աշխատանքի ձեռք  
մեկնելը Թորոսի թեւ ընկերն էր իւր կողակից

չքնաղ Մարգարիտը, որի որդւոյ և թոռնե-  
րի թիւը այժմ մի քանի տասնեակներն է  
հասնում: Դեռ երեսի ծածկոյց՝ չիկիրան յետ  
չէր տարել Մարգարիտը (Շիրակում սովո-  
րութիւն կար, որ մինչև եթէր տարի նորա-  
հարսը պիտի ծածկէր իւր երեսը քօղով),  
որ բնատնեկան հօգսը ծանրացաւ վրին: Մի  
կողմից իւր մնակ մարդուն զաշտային աշխա-  
տանքում օղնելը, միւս կողմից բնատնեկան  
ծանր՝ դործերը, երրորդ կողմից իւր պատա-  
ւ և հիւանդոտ սկեսրջ ինամատարութիւնը  
փոխանակ նրան յուսահատութեան մջ  
քցելու, աւելի եռանդ և ոգի ներշնչեցին  
լի յոյսերով դործին կաշկու: Սրա համար  
պարտաւ ասուած բառը զոյգութիւն չու-  
նէր, շարունակ դործում և գործում էր:  
Գարուն, ամառ, աշուն թէ ձմեռ ամենայն օր  
դեռ լոյսը չբացուած նա հունձում վերջա-  
ցնում էր խմորը իւր աննման ձեռներով, կրե-  
քում խաշաձէ, ապա դուրս գալիս՝ երեսը  
աղօթարանի կողմը դարձրած նոր ծագող բա-  
րիւրուսի գէմ ջերմեանդ սրտով հաստա-  
տուն հաւատով աղօթում՝ կիսատ-պատտ  
«Հայր մերն» ասում, իրեն ծանօթ բոլոր սրբ-  
երկին օգնութիւն կանչում և իւր գլխի տէր  
Թորոսի բանին, դործին յաջողութիւն բարե-  
մաղթում, յետոյ հանդարտ քայլերով ներս  
գնում ձայն տալիս Թորոսին, որ արդէն լուս  
է, գործ սկսելու ժամանակ: Թորոսին օգնե-  
լուց և ճանապարհ քցելուց յետոյ դեռ ճի-  
քան գործ է մնում կատարելու, կովերը  
պէտք է կթել, կաթը տեղաւորել, գովերը  
մաքրել, չորցնել, թոնիրը վառել, հաց թխել,  
կերակուր եփել և տաք տաք բաժին հանել  
այդ կերակրից իւր սիրելի Թորոսին փաթա-  
թելով փափուկ լաւաշների մջ և շուտափոյթ  
տեղ հասցնելով: Սորանից յետոյ եթէ դա-  
րուն է՝ բարու ժամանակ, դրացի հարսների  
հետ դաշտ գնալ, սիպեղ, ժախ, զօխ, երիւ-  
նակ քաղել և ձմեռուայ պաշար պատրաստել,  
իսկ եթէ ամառ կամ աշուն, ո՛հ չարքաշ բոսի-  
ներ, «քիթ սրբելու միջոց չկայ», քրտնքը  
առուի նման հոսեցնելով դէմքից, շտապելուց  
ձեռներն սյրելով, հազիւ վերջացնում է հաց  
թխելն, պէտքէ հասնի արար կամ կալը, դեռ  
այնտեղ սրբան բուն կայ անելու, անօգնական

Թորոսին օգնելու. փոցխելի ցորենն հաւաքելի կամ կայր շրջելի կառապ քաշելի թեղելի աշան անելի էլ ո՞վ է իմանումն հազար ու մի բան: Իսկ եթէ անցել է գեղեցիկ դարունը, կրակոտ ամառը, տանջող ու միթիթարող աշունը և անբաւական է ծերունի ձմեռը այն ժամանակ էլ նա պարապ չէ, թէ և այս անգամ աւելի իւր քնքոյշ սեռին պատկանող դրամունքներ են շրջապատել իրան: Այս ձմեռ քանի կարպետ և նոյն իսկ խալիչայ պէտք է գործել, Թորոսին և ծերունի կեւրայրին գեանադործ չուխացու և շալվարցու մանել, ամիսներով գետնի երեսին դեղերուած գործել, իրան և պառաւ սկեսրոջը շալէ գողնոց մանել, հապա իւր գեղեցիկ հրեշտականման աղջիկներին՝ Մարթան, Զարգարը և Նիշուհը, որ մինը միւսի յետեւից հասել է, որքան հոգս պէտք է տանել, այժմանից ջէհելի (օժիտ) պատրաստութիւն տեսնելու ահագին շարաններով խէտրտիկ գուլթաներ գործել, տեսակ տեսակ քիսաներ պատրաստել, նոյն իսկ ջէջիմի համար թել մանել և հազրել:

Զնայած գործի ծանրութեան և կուտակմանն, նա մի բոպէ անգամ չի մոհան անում իւր պառաւ և հիւանդոտ սկեսրոջն: Ինչպիսի հոգատարութեամբ և խնամքով մօտենում է նա պառաւին, և ինչ սիրով զբրկում բարձրացնում է տեղից նրան, բոլոր պէտքերը հոգում, սրտի ուղածն իսկոյն պատրաստի մօտը դնում, մինչև անգամ իւր և իւր սիրելիների բերանից վերջին թիքէն կրտում խլում՝ յետ քցում և նրա համար պահում: Բարի պառաւը տեսնելով իւր հոգու հատոր հարսի ցերեկ և գիշեր քաշ գալլն անդու ու անդադար գործելն, մանաւանդ որ նրա գործի ծանրութեան ամենագրկաւոր պատճառներից մէկն ինքն էր, չէր կարողանում իւր չորացած աչքերում արցունքը զսպել, ձեռներն վեր էր բարձրացնում շատ անգամ և լալագին ձայնով կանչում. «Մարգարիտ ջան, ոչինչ չունեմ քեզ վարձահատոյց լինելու, մեղաւոր բերանովս կը խնդրեմ, որ օխթ որդւով սեզան նստիս, հող բռնես ոսկի դառնայ, չոր քարին դիմես, կանանչ դառնայ»: Եւ միթէ այդ քիչ էր Մար-

գարտի համար, իւր սիրելի Թորոսի սիրար չը կոտրել, մեծին երախտահատոյց լինել և նրա օրհնէքն առնել: Ո՞հ ինչպէս սրտի ջերմ բարխումով ընդունում էր նա այդ օրհնէքը և որքան վարձատրուած էր համարում իրան:

Իսկ նրա գլխի տէր Թորոսը ինչպէս էր անցկացնում տարին:—

Ահա նա զոյգ եղներ լծած արօրի մածը ձեռին վարում է: Գլխի վերեւը այրտոյտն է իւր քաղցր դայլալիկը հնչեցնում, չորս կողմը սարեկներն ու ծիծեռնակները իրանց բաժինն հաւաքում նրա օրավարից: Մեղմ՝ զեփուր հովացնում է նրա կուրծքը, իսկ նոր կենդանութիւն առած զարնանային արեգակը դէմ երեսին ժպտում իւր օգնութիւնը խոտանալով: Ինչպիսի լի յոյսերով մինչև երեկոյ հողի հետ կռիւ է մղում նա: Հեռու մարդկանց խորհարտութիւններից հանգիստ սրտով և մաքուր խղճով գործ ունի երկնի և երկրի հետ: Ծրկնից ցօղ, երկրից պտուղ, այս է նրա խնդրածը իւր հոգը առեւտրակիցներից: Արեգակը արտումն է, ողջունում նրան և արտումն էլ իւր հրաժեշտը տալիս: Ոչ կատաղի քամին է նրա բարկութիւնը շարժում և ոչ խորշակն ու կարկուտը հանգարտութիւնը վրդովում: Մինչև երեկոյ բնութեան անողոք տարրերի հետ մըցելով վերադառնում է տուն դադրած ու վատտակած՝ իւր խաղաղ յարկի տակ հանգիստ առնելու զիշերային ժամուն: Պատրաստ է նրա Մարայի ու Ջէյրանի (եղների անուն) համար տաք գոմը, մուրները լի խոտով և յարգով, կոպտոնը և դարէ ալիւրից շաղաղած փաղաղն, որ իւր քնքուշ ձեռներով է պատրաստել Մարգարիտը: Պատրաստ է նրա համար տաք օդան վառած օջաղով, որի վերայ տաքանում է թանհէ ապուրը: Հաղիւ տեղաւորում է նա գործիքները, կապում եղներն, ներս մանում օդան, և ահա նրա առաջ չորում են մանկահասակ աղջիկներն, մէկը չորացած տրեխների կապն է արձակում, գուլպան և պաճիճը ոտից քաշելով հողից խաշուած մատները արօրում միւսը կոշկոռոտ գուլպաները ննդելով հողը վրայից թափում փափկացնում և տրեխներն թրջում առաւօտեան

Համար պատրաստի լինելու, իսկ երբորդը ձեռներին ջուր ամռամի սաները լուանում:

Արջացաւ վար ու ցանքը Թորոսը բաժնու բրիչ ձեռնն արտի գլուխը կանգնած է: Պէտք է ակոսներ փարել՝ անձրեկից յառաջացած հեղեղը դէպի արար դարձնել արտի շուրջը փոսեր փորել տեղ տեղ անց ու դարձ անոցների սայլից և տաւարից ազատ պահելու ցանքը: Պէտք է արտի միջի քարն հաւաքել փուշն ու անպէտք խոտերն քաղնել և միջոց տալ ցորենին աճելու: Ո՛նչպիսի եւանդով և ոգևորութեամբ նրա մատաղահաս աղջիկներն մի մի ջուպ կապած գոցնոցի փոխարէն կամ՝ մի մի փոքրիկ քթոց՝ չապուկի լեւերի տակն առած հաւաքում են քարը իրանց քնքուշիկ ձեռներն ստանց քաշուելու մեկնում՝ դէպ սուր սուր ծայրերով վնասակար փշերն քարշում արմատախիլ անում և դուրս ձգում արտից: Ո՛նչ հոգս թէ նոցա չքնաղ դէմքը արեւը կայրէ, քամին կը սևացնէ: Հէ՛ որ գրանով նոքա աւելի գեղեցիկ կը լինին: Դա բնութեան կիներն է, որ գնում է իւր հարազատ գաւառների ձախարհն:

Հասել է արար: Մրա ոսկեղոյն ամօք հասկերը խոնարհել են ծանրաբեռնուած զբլուխներն դէպ դեպին: Դիմացիուն ցողունը հիւսուած միմեանց հետ տատանում է իրա ծանր բեռի տակ: Հովաշունչ դիփւււր ողջունելով նրանց պահպանում է արեգակի կիպող ճառագայթներից: Լցուել է արար Աստուծոյ բարիքով և որպէս մի հանդարտ ակեան տատանում ու ծփում է:—Մրա մի գլխից մինչև միւսը մաղ կը գլորի առանց կանգ առնելու:—Թորոսի սիրար անսահման բերկրութեամբ լցուել է: Ո՛նչպէս ինքն է ասում՝ ուրախութիւնից սաները գեանէն կրտուել են չի խմանում ինչպէս արտայայտ, արտի գոհունակութիւնը վեր է առնում իւր ահադին փափաղը գլխից դցում դէպի վեր և քաղցր մրմունջով ասում փառք Զեյ Աստուած տունդ շէն արա տարի էլ հացցիր մատղշներուս դմաթը: Ո՛նչ ուրախ սրտով ուղևորում է տուն: Ո՛նչպիսի ոգևորութեամբ պատրաստում է գերանդին փոցը և զանն և խորով շապիկն ու չալուրը: Կանուխ առաւօ-

տեան գերանդին ուսին րրբակի ամանը ձեռնէ լապտախն դօտուց կախած՝ նա արտի գլուխը պիտի լինի: Ո՛հ ինչ քաղցր ժամ: Մնաք բարեաւ հանգիստ քնոյ ժամը—գերանդին արտ մասու ցորենի քարն ընկաւ նրան անմիջապէս կը յաջորդէ կալը:—Մինչև այժմ էլ ձերուսի Թորոսը ինչպիսի ցնծութեամբ յիշում է այն հոգեպարար ժամերն և մի առանձին հրճուանքով պատմում իւր որդոց թէ ինչպէս դեռ թոփ աստղը (բուլք) չերած՝ նա երեք լաւաշ հացերի մէջ երկարացնում էր կովի ծորան իւրը նրա վրայ տնում Փամբակու մեղրը փաթած լեւոյ լաւաշները տալ մուջ անում և ուտելով դիմաորում դէպ արտ: Մինչև լոյսը բացուելն և դրացիների գաշա դուրս գալն նա արդէն խորմած կանգնեցրած էր լինում երկու եղն այն լծափուլներից, որ նախկին օրը իւր նազանի աղջիկներն՝ Մարթան, Զարդարն ու Մշխունը լծափել էին: Արեւ ծագելուն պէս այդ անհրման արարածները փոցերն ուսերին արտի գլուխն են լինում: Հայրը վայր է գնում խորովի չիպուղն հանում խորովի շապիկն ու շալվարը և գերանդին առած սկսում է քաղել աղջիկներն փոցում են նրա լծափած ցորենը և լծափուլներ շինում պատրաստի լինելու եկող գիշերուան: Արեւ հայր բարձրացել է երկու գաղ ասա Մարդարխոր բերեց խաշին նոր լծաւած լաւաշների հետ: Ո՛նչպիսի հպարտութեամբ որպէս յաղթանակ տանող մի զօրասկաւ Թորոսը գերանդին ուսին դրած ձեռքին նայում է մերթ իւր սիրելի Մարդարխորն մերթ նորատունկ եղններին նրա ուրախ շրթերները կարծես մրմնջում են ցոյց տալով Մարդարաին եղները որպէս յաղթական կամարներ—տես տես այ կնիկ մի գիշերուայ մէջ մի քանի ամառայ պաշար եմ հաւաքել: Ուրախ ուրախ նստում է նա եղնի հովում տաք տաք խաշին դգալ գգլի յեանից ուղարկում «Միկոյի ակտը» (փորը) և սաւը ջուրը վերայից կոնծելով տնուշէն «օխայ» ասում ու գերանդին ձեռառնում:

Կալոց է կայն օրանով լի: Հանդարտարոյ եղն և ուժեղ գոմէշն իրեն աշխատակից ունեւալով ամբողջ օրը չարչարուելուց յեա՝ յար-

ձակում է նոցա գիւղացիին հանգիստ տալու, բայց ինքը հանգիստ չունի. ժամ է գործելու: Արեգակը իւր վերջին ծառագայթներն է հաւաքում՝ բարձրագագաթ լեռներից, մեղմ քամին սկսում է փչել: Փշիւր, ցանկալի քամի. որքան որ դու գով շնչովդ հովացնում ես լեռնոտ կուրծքը բազմաշխատ գիւղացու ցերեկուայ տապից յետոյ այնքան էլ լցնում ես նորա բարի սիրտը անսահման բերկրութեամբ: Այսօր նա քեզանով պիտի իւր դառն քրանքի պտուղն հաւաքէ. դու պիտի լինիս նրա աշխատակիցը և պատկիչը ջանքերի: Ո՛հ, որքան նախանձելի ես դու այդ բուսկին, քամի գործակցել մաքուր և անարատ սրտերի հետ, զանգ ցառն աշխատանքի պտուղը նոցա և անսահման ուրախութիւններին ուրախակից լինել:

Կան կախիւր, որ եօթնութ տղամարդ մի անգամից է բարձրանում թեղի գլուխն և զոյգ զոյգ եղած սկսում քամէլ ցորենն: Բայց Թորոսը մենակ է. ո՞վ կօղնէ նրան այսպիսի մի նեղ ժամանակի թէև դրացիները բարի են և պատրաստ օգնելու, բայց ո՞վ կը թողնի իւր եղնը դաշտում, թեղը կալում, գուցէ և անքաղել ցորենն արտում ու շտապի նրան օգնութեան: Երա օգնական և զօրավիղն Մարգարիտն է, որ հուրսելին ձեռքն կանգնած՝ յուսոյ կրակով լի աչերն ուղղել է դէպի իւր թագ ու պսակ Թորոսն և սպասում նրա հրամանին, որ սկսէ գործը: Մարդ և կին, որպէս զոյգ ամուսնիւր, բարձրանում են թեղի գլուխը, նոցա առոյգ բազուկներն սկսում են շարժուել: Լուսինը, այդ աղքատի ծրարը, որպէս փոխանորդ իւր կենսատու աղբիւրին, հետզհետեւ աւելացնում է իւր մեղմ և կաթնանման լոյսը: Ամեն ինչ զիւթական կերպարանք է ստանում, կարծես օդը շնչում է գործունէութեան և ներդաշնակութեան ոգւով: Համաշափ և համահաւասար յառաջ է ընթանում զոյգը. գործում է նոցա հուրսելին իւր քաղցր խշռոցով խառն դարմանն ու ցորենն վեր բարձրացնում, գործում է նոցա միտքը... գործում է սիրտը...

Այժմ՝ ձերունի Թորոսը ունի հինգ որդի, հինգն էլ ամուսնացած, որդւոց և կանանց աւել: Երա երեք աղջիկներից ամէն մէկը

մի համբայ տան տիկին է, և կառավարիչ կանանց բաժնի գիւղի մէջ, յայտնի ժրագլուխ և ինչպէս ասում են եփուած անտես: Թորոսի մեծ որդին Սաքօն, մի հեղահամբոյր, բարեկալելուց կազմուածքով, միջակ հասակով տղամարդ է. թէև հօրից յետոյ տան հոգսը և կառավարութիւնը նրա վերայ է ծանրանում, բայց նրա զէմքը լաւ գննողը կարող է վկայել, որ նա շատ քիչ է ծանօթ հոգսերի աշխարհին: Մանուկ հասակից, որպէս առաջին արու զաւակ, ծնողները նրա վերայ գուրգուրալով էին մտիկ տալիս: Մինչ հինգ — վեց տարեկան հասակը, հակառակ գիւղական սովորութեան պատու մամի ծնկից վայր չէր իջնում, որն շատ անգամ ձեռների վերայ վեր վեր էր լծացնում և հետն երգում. —

Թուի, թուի, թուցնում  
Սե հաւի միս կերցնում  
Մօրդ մազին ...  
Հօրդ թեկն հաացնում:

Սաքօն պատանի հասակում, որ արդէն ժամանակ է օգնելու հօրը, իւր քոյրերի պատմելով այնքան թոյլ էր սովորել, որ քաղի ժամանակ հինց որ արեւը սեղմում էր և Սաքոյիս գլուխն ուռչում, օդուտ քաղելով հօր դէպի ինքն զիջող բնաւորութիւնից, քցում էր ձեռի փոցը կամ եզանը արտի մէջ՝ թողնում փախչում դէպի բարձր տեղանք կամ աղբիւրների մօտ և այնքան լծափառում, մինչ օրուայ շոքն անցնելն, ապա վերադառնում արտը և գործի կալում: Այժմ էլ Սաքօն շատ քիչ է գործ կատարում տան մէջ. միայն ամառը և աշունը քաղի կալի ժամանակ փոքր ինչ օգնութեան է հասնում եղբայրներին դաշտային աշխատանքում, իսկ ձմեռը և գարնան շարունակ զբաղուած է լինում գիւղական գործերով և վեճերով՝ հողարաժնի, քիւյց, գլաւնի փոխելու, հարկ հաւաքելու և այլն:

Սաքոյից փոքր եղբայրը՝ Ծոն բնաւորութեամբ բոլորովին հակառակ տիպարն է, մեծ եղբոր: Նա ամենին գլուխ էլ չունի գիւղական կամ ընտանեկան վեճերի մէջ մտնելու. բաւական է, որ իւր երկրագործական գոր-

ծիրները, չուժն ու գուժանքը, եղն ու գոմէշը, կարգն ու սարքը լրիւ լինի և նա բոլորովին գոհ է իւր վիճակից, թէկուզ իւր հագին չուխայ ու արխալուզ չը լինի, ոտին չարօս-գուլրայ, կամ թէ իւր կնոջն ու որդւոց մերկ պահեն հայրն ու եղբայրը, իսկ թէ վերոյիշեալները պակաս են, Աստուած հեռուանի՝ թէկուզ աշխարհն էլ Եղոյին տան, նրա նեաթը՝ չի բացուի, ամբողջ օրով ծարաւ, անօթի, աչք ու ունք կիտած, դէմքը աշնան «հաւայ» դարձրած գոմէշի ու եղայ մարքներից գուրս չի գայ ու բերանը հացի թիքայ չի գնէ, մինչև իւր կամքը կատարուի:

Մարտ և ապրիլ ամիսներում՝ դաշար բացուելուց և սերմն արտ ընկնելուց սկսած նրա գօտիլը չի քանդուի և ինքը եօրդան-գօշկի երես չի տեսնի մինչ ցանքը վերջացնելն և արտախլիս կատարելն, գուժնին և քաղին ոչ թէ եօրդան-գօշկի ու տան, այլ և գիւղի երէս էլ չի տեսնի մինչ օրանի կալը թափելն, իսկ մնացած ժամանակը ինքն գիտէ ու իր Շէկօն ու Նապլուն, Մարալն ու Զէյրանը, նրա խօսքն ու խօրաթէն, միտքն ու խորհուրդը նրանց հետ է:

Եղոյից փոքրը՝ Վաթօն մի այլ արագ է ներկայացնում: Նա ամէն ժամանակ պատրաստ է Եղոյին օգնելու ամէն բանում՝ դաշտում թէ տանը, բայց և այնպէս իւր խելքն ու միտքը սիրան ու հոգին գիւղական գէնք ու զրահի (սիւլայ) հետ է: Տարին եթէ երեք-չորս գառ չը տայ և երեք-չորս թարաքամի հարայ (դականակ) չառնի ու ձուռն ընկած երկաթը նրանց կոպակ գլխներուն չը կպցնէ, ու եղէ առիքը չը գարկէ, ցերեկը նրա դա-դարումը չի տանի, գիշերը քունը: Փշտովն ու պատրոնը, թուրն ու խանչալը նրա միշտ կազմ և պատրաստ՝ մաքուր սրբած կախ սլի-տի լինին սեան երեսից: Կառոյտն ու Ալա-բաշը (չների անուն) նրա մօտերիմ՝ ընկերներն են աշնան ոչխարի մօտ, գարնան ու ամա-ռը սէլի ու մայի մօտ:

Միւս երկու փոքր եղբայրները՝ Սէնօն ու Վնօն գեռ նոր հաւ եղած, թառը գրուած, նոր ոտ կոխած կեանքի ասպարէզ, թէև երկուսն էլ ամուսնացած, ինչպէս երեւում է իրենց համար գեռ մի մասնաձիւղ շնն ընա-

րիլ, այլ լոկ կամակատարներ են մեծ եղբայր-ների:

## Երուանդ Մովսիսեան



ՔՆՆՈՒԹԻՒՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՐԲԱՌԻ.

ՈՒ

Ու ձայնին առած դերքերուն մէջ յատկապէս երկու պարագայ պէտք է որոշել. 1. Ու ձայնաւորի քով. և 2. Ու բաղաձայնի քով կամ անկախ:

### 1. Ու ձայնաւորի քով.

Այս պարագային ու կը վերածուի 1. վ-ի. օր. շվահի՝ շուարիւ, անգլիս՝ աղուէս, քվայ՝ թուիւ, երեւալ ևն:

2. Մէկ քանի գէպքի մէջ յաջորդական ա ձայնին հետ կը կազմէ ուս երկբարբառը. այսպէս են՝ լուան՝ շուան. քրուա՝ հմ. քրուա՝ թթուիւ. փռուա՝ բուրվառ համարելով իբր բուռառ, Գո-րեւի և Թաղոտի բարբառները սակայն ասոնց գէմ ունին լրիւն, քրքվա, քրքիւ, փխռվա:

3. «Աստուած» բառը առած է Ա՛ստուծ ձևը. սակայն ասիէ՝ ածանցուած կան Աստվածամիմ կամ Աստվածմիմ, անաստուծ կամ անաստված ևն:

4. «Թծուառ» բառին մէջ ու ջնջուած է, որով բառս առած է տհր, տտր ձևերը:

### 2. Ու ձայնաւորի քով կամ անկախ.

Այս երկու դերքերուն մէջ ալ ու ձայնը կը մնայ իբր ձայնաւոր, ուստի և ենթակայ շեշտա-դրութեան սովորական կանոններուն՝ հետեւեալ ձևով.

1. Շեշտն անփոփոխ մնացած դարբարի միալանի բառերուն մէջ՝ մինչև իսկ բաղմալան-կի վերածուած ժամանակ. օր. ֆօն՝ քուն, սօյնը՝ սունկ, կնայր՝ կուպը ևն:

2. Բաղմալանի բառերու շեշտեալ ու վե-րածուած անշեշտի. օր. վնցցուն՝ վաթսուն, Կրկու՝ երկու, Խրքումնը՝ երդումն ևն:

3. Վերջալանի շեշտը վերջնութեւր ու-ին վրայ տեղափոխուած. օր. ունաթ՝ յունապ, Կօզիւ՝ քազիւ, ֆուակ՝ քուռակ ևն:

4. Նախվերջնութեւր վանկերու ու-երը իբր անշեշտ վերածուած ը-ի. օր. կրքրղրիս՝ կաթու-ղիկոս, ուրիշ օրինակ չի պատահեր:

5. Հակառակ ընդհանուր կանոնին շեշտ